ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» Նոյեմբերի 2014թ. N 223

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի նոյեմբերի 6-ի N08 և Նոր Կեսարիա համայնքի ղեկավարի 2014 թվականի նոյեմբերի 12-ի N103, գրությունները

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա.«Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «7.Մուրադյան Ծովինար– ծնող» բառերը փոխարինել «7.Միքայելյան Սերիկ– ծնող» բառերով, «8.Մովսիսյան Ռուզաննա– ծնող» բառերը փոխարինել «8.Հովհաննիսյան Լիաննա - ծնող» բառերով,

բ.«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «4.Բաղդասարյան Տիգրան - համայնք» բառերը փոխարինել «4.Կնյազյան Գոհարիկ - համայնք» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ